

Թիֆլիսի Հայոց Գրամ. Ընկերութեան ձեռնարկութեամբ, նոյեմբ. 21-ին Արտիստ. Ընկ. թատրոնում կայացաւ հանդիսաւոր ներկայացում ի պատիւ դերասանուհի տ. Զարէլի բեմական ծառայութեան երեսնամեակի: Տիկ. Զարէլ, լինելով հայ բեմի վաղեմի մշակներից մէկը և երկար տարիներ ամենայն բարեխղճութեամբ կատարած լինելով իր գեղեցիկ գործը, այդ օրը թատրոնէր գրաւել բաւական մեծ բազմութիւն: Նոյն երկրոյեան խաղացուած պիէսի՝ «Արդիւնաւոր Պաշտօնի» մէջ յօրե-



Տ. Զարէլ

լեարուհին ցոյց տուեց որ չի յօգնել դեռ ևս ծառայելու իր մայրենի բեմին:

Ներկայացումից յետոյ եղան շնորհաւորանքներ, հեռագիրների ընթերցում, մատուցուեցին զանազան ընծաներ և դրամական ծրարներ:

Տիկ. Զարէլ արժանի էր այդ օրը իր ստացած մեծարանքների:

## ՅՕԲԵԼԵԱՆՆԵՐ ԱՌԱԶԻԿԱՅՈՒՄ

1894 թուականը, որ լրանում էր մեր պարբերական մամուլի հարիւրամեակը, (առաջին հայ լրագիրը հրատարակուել է 1794 թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում, Յարութ. ք. Շմաւոնեանի ձեռքով), - հայ զբաղէտ հասարակութիւնը ուզեց մի խոշոր բանով յաւերժացնել այդ կուլտուրական տօնը: Գրեցին, խօսեցին, բայց մի առանձին ուշադրութեան արժանի բան չարին: Վիէննայի Մխիթարեանները նոյն ժամանակի հայ խմբագիրների մի լուսատիպ պատկեր հրատարակեցին. նաև լոյս տեսան Գ. Վ. Գալէմբարեանի (Վիէննա) և Գ. Զ.

Լևոնեանի (Ալէքսանդրապօլ) հայ պարբերական մամուլին նուիրած պատմական տեսութիւնները. և դրանով էլ այդ հարցը փակուեց:

Անցեալ 1906 թուականին թեակոխում էինք մի շատ աւելի նշանաւոր տարեմուտ. լրանում էր հայ տառերի գոյութեան 1400-ամեակը. մի համագրային նշանաւոր տօն, որ ուրիշ ազգեր կոթողներ կը կանգնեցնէին, մենք մի երկու յօդուած գրելով օրաթերթերում, վերջացրած համարեցինք մեր անելիքը: (Արդարանալ կարողանանք թերևս նրանով, որ 1906-ին «սև տարի» էր): Այժմ, յայտնի պատմագիր-հրապարակախօս Լէօն, «Հորիզոնում», առաջարկում է ազգին, տօնել հայ տպագրութեան 400-ամեակը, որ լրանում է առաջիկայ 1912-ին: Ո՞վ գիտէ թէ սա էլ չի անցկենալու աննկատելի: Մինչև այժմս արձագանք է տուել այս գեղեցիկ առաջարկութեան Արշակ Չօպանեան իր «Անահիտ» հանդիսում.

«Անհրաժեշտ է, ասում է պ. Չօպանեան, որ այդ մեծ տօնը տօնելու և այդ առթիւ հայ գրականութեան զարգացումը ապահովող այսպիսի ձեռնարկ մը յաջողցընելու համար՝ ոչ միայն Ռուսահայք այլ և թրքահայ ու պարսկահայ հասարակութիւններէն, ինչպէս և արտասահմանի կարևոր զաղութներէն ներկայացուցիչներ գտնուին այդ համագրային նշանակութիւն ունեցող հանդիսաւորութեան. արդ, ծանօթ ըլլալով մեր անհոգութիւնը՝ դանդաղութիւնը, գժրախտաբար շատ յոյս չունիմ»...

## ՅՈՎՀԱՆՆԵՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Ռուսահայ նորագոյն քնարերգութեան անդրանիկ դէմքը, Յովհաննէս Յովհաննիսեան, բոլորում է իր զրական գործունէութեան երեսուն տարին: Թիֆլիսի հայ օրաթերթերում հարց է բարձրացել մօտիկ ապագայում տօնել տաղանդաւոր քնարերգուի երեսնամեայ յօբելեանը: «Գեղարուեստի» խմբագրութիւնը, որ իր աշխատակիցների ցանկի մէջ պատիւ ունի տեսնելու պ. Յովհաննիսեանին, իր կողմից ևս կոչ է անում հայ ինտէլիգենտ հասարակութեան՝ կազմակերպել մեր քաղաքացիական վշտի շնորհալի բանաստեղծի յօբելեանը և մասնակցութիւն ցոյց տալ այդ տօնին: Ահա առաջ ենք բերում պ. Յովհաննիսեանի նախկին աշակերտ և մեր աշխատակից Գուրգէն Հայկունու այդ առթիւ գրած մի կոչ-յօդուածը, մեր ասելիքը, տաղանդաւոր քերթողի մասին, թողնելով հետեւեալ անգամին:

### ՉՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ

Քանի և քանի հարազատ, ազնիւ, անխոնջ հոգիներ գրկել են խոնան, մթին սառ հողը խոցուած կարծիքէր: Գոյութեան կուռի դաժան, ահալի հարուածներն անգամ չեն կարողացել արմատից խել նրանց փայփայած տենչերը զօրեղ, որոնք որ անչափ, խոցող ու թովիչ, խոր մեխուել էին նրանց ապակեայ սրտերում բիւրեղ:

Բնութեան ծոցում ոչինչ չի կորչում:

Կանցնեն տարիներ. և ահա կրկին հնութեան փոշուց նոր հանդէս կը գան չարքաշ մշակներ—մեռած հոգիներ երբեմնի ապրած: Թոյլ ոսկորներից ահեղ կը հնչի մի ձայն սրբազան:—

«Թողէք ներբողներ, խաբուսիկ պատրանք երկրային փառքի, սնամէջ խօսքեր ցուցամոլութեան:

«Բացէք վանդակը սրաթև արծուի, որ հա խոյանայ, ամպերը ճեղքի և հսկայածիք լերան կատարին վերամբարձ ճախրի հպարտ, անսասան: